

Երրորդ հաղորդում

Աստծու զորությունն ու Աստծու իմաստությունը

Գրվածքների ընթերցում. Ա Կրթ 1:2, 23-24, 30, Հռմ 6:6, 19, 22,

Եփս 1:9, 11, 3:11

I. Նախքան Ա Կրթ 1:24-ում Քրիստոսի՝ որպես Աստծու զորության ու իմաստության մասին խոսելը Պողոսը 23-րդ խոսքում ազդարարում է. «Մենք բարոզում ենք խաչված Քրիստոսին՝ հրեաների համար խոչընդոտի, իսկ հեթանոսների համար՝ անմտության»:

Ա. Սա ցույց է տալիս, որ Քրիստոսը, ով Աստծու զորությունն ու Աստծու իմաստությունն է՝ Աստծու տնտեսությունն իրականացնելու համար, խաչված Քրիստոսն է, այն Քրիստոսը, ով ոչինչ չարեց Իրեն փրկելու համար՝ խ. 24:

Բ. Մարդկանց աչքին, եթե մարդը խաչվել է, նա համարվում է անգոր, քանի որ զորավոր մարդը թույլ չէր տա, որ իրեն խաչեին. այդուհանդերձ Քրիստոսը, ով Աստծու զորությունն է, խաչվեց:

Գ. Ավելին՝ մարդկային տեսանկյունից՝ իմաստուն մարդը խաչելությունից խուսափելու ճանապարհ կգտներ, բայց Քրիստոսը, ով Աստծու իմաստությունն է, խաչվեց՝ Գղտ 2:20:

Դ. Խաչված Քրիստոսն Աստծու զորությունն է՝ Ա Կրթ 1:24.

1. Քրիստոսի խաչի մեջ տեսնում ենք Աստծու զորությունը:

2. Սատանային, աշխարհին, մեղքին, ընկած մարդուն, մսեղիին, քնական կյանքին, հին ստեղծագործությանն ու հրամանագրերը հաղթելու համար անհրաժեշտ է Աստծու զորությունը:

3. Քրիստոսի մահը՝ Նրա խաչելությունը, Աստծու զորությունը դարձավ՝ խ. 24:

Ե. Խաչված Քրիստոսն Աստծու իմաստությունն է՝ 2:7.

1. Ինչ-որ բան իրագործելու համար մեզ անհրաժեշտ է Քրիստոսը թե՛ որպես զորություն, թե՛ որպես իմաստություն՝ 1:24:

2. Իմաստությունը ծրագրելու, մտահղացում կազմելու համար է, իսկ զորությունը՝ ծրագրածն ու մտահղացածն իրագործելու, կատարելու համար:

3. Երբ փորձառաքար ապրում ենք խաչված Քրիստոսին, Նա մեզ համար դառնում է ոչ միայն Աստծու զորությունը, այլև Աստծու իմաստությունը՝ Հռմ 6:6, Գղտ 2:20:

4. Խաչված Քրիստոսը՝ որպես Աստծու իմաստությունը, կապված է Աստծու խոր և հիմնավոր ծրագրի հետ, որը համապատասխանում է Նրա հաճությանը, ինչպես նաև Նրա կամքը կատարելու Նրա ճանապարհին՝ Եփս 1:9, 11, 3:11.

- ա. Քանի որ ունենք խաչված Քրիստոսին՝ որպես Աստծու իմաստության, կարիք չունենք Աստծու կամքն իրագործելու համար ճանապարհ փնտրելու:
- բ. Պարզապես փորձառաքար ապրելով խաչված Քրիստոսին՝ մենք ինքնաբերաբար Աստծու կամքը կատարելու ճանապարհ ենք ունենում:
- գ. Մենք շատ իմաստուն ենք դառնում Աստծու կամքը կատարելու հարցում՝ Կդս 1:9, 4:12:
- դ. Եթե փորձառաքար ապրենք խաչված Քրիստոսին, Քրիստոսը մեզ համար կդառնա Աստծու իմաստությունը՝ Նրա ծրագիրը իրագործելու համար. մենք կունենանք Աստծու իմաստությունը՝ Նրա կամքը կատարելու համար՝ 1:9:

2. Երբ փորձառաքար ապրում ենք խաչված Քրիստոսին, մեզ վերջ է դրվում՝ Գդտ 2:20.

- 1. Այն ամենին, ինչ մենք ենք, ինչ ունենք և ինչ կարող ենք անել, լիովին վերջ է դրվում:
- 2. Եթե կանչում ենք Տեր Հիսուսի անունը՝ փորձառաքար ապրելով ու վայելելով Նրան, Նրա խաչելությունը մեզ վերջ է դնում:
- 3. Խաչված Քրիստոսը ոչ միայն զորություն է, այլև մսեղիից, բնական կյանքից և հին ստեղծագործությունից մեր ազատվելու ճանապարհը:

II. Որպես նրանք, ովքեր կանչվել են Աստծու կողմից, մենք պետք է ճանաչենք ու փորձառաքար ապրենք Քրիստոսի զորությունն ու իմաստությունը՝ Ա Կրթ 1:24.

Ա. Ա Կրթ 1:2-ում հիշատակված են «կանչված սրբերը».

- 1. Քրիստոսին հավատացողները կանչված սրբեր են, ոչ թե սուրբ լինելու կանչվածները. սա դիրքի հետ է կապված, այսինքն՝ ըստ դիրքի սրբացման, որի նպատակը սրբացումն է ըստ նախահակման:
- 2. Տիրոջ անունը կանչելը Նրան ներհավատալ է ենթադրում՝ Հռմ 10:14:
- 3. Բոլորը, ովքեր հավատում են Տիրոջը, պետք է կանչողներ լինեն՝ Գրծ 9:14, 21, 22:16:
- 4. Մենք կանչվել ենք, որպեսզի կանչենք. Աստծու կողմից կանչվել ենք, որպեսզի կանչենք Տեր Հիսուսի անունը:
- 5. Նրանց համար, ովքեր կանչված են Աստծու կողմից, Քրիստոսն Աստծու զորությունն է և Աստծու իմաստությունը:

Բ. «Նրանց համար, ովքեր կանչված են» արտահայտությունը (Ա Կրթ 1:24) վերաբերում է հավատացյալներին, որոնց Աստված ընտրել է հավիտենության մեջ (Եփս 1:4), և որոնց ժամանակի մեջ հավատացել են Քրիստոսին (Գրծ 13:48):

Գ. Նրանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին ու կանչում Նրա անունը. Նա Աստծու զորությունն է և Աստծու իմաստությունը:

- Գ. Խաչված Քրիստոսն Աստծու զորությունն է՝ մեր փրկության համար, և Աստծու իմաստությունն է՝ Աստծու ծրագիրը կատարելու համար:
1. Չորությունն ընդունակությունն է, իսկ իմաստությունը՝ ճանապարհը:
 2. Քրիստոսը նախ՝ մեր զորությունն է, և ապա՝ մեր իմաստությունն է, այսինքն՝ մեր ճանապարհը:
 3. Քրիստոսն Աստծու զորությունն է՝ Աստծու տնտեսությունն իրագործելու համար, ու Նա նաև Աստծու իմաստությունն է՝ Աստծու ճանապարհը, Աստծու տնտեսությունն իրագործելու համար:
- Ե. Քրիստոսը՝ որպես Աստծու զորությունը, մեզ անրապնդում է դինամիկ զորությամբ՝ մեզ մատակարարելով ու սատարելով այն ամենում, ինչ մենք ենք և անում ենք:
1. Մեր բոլոր հանգամանքներում ու վիճակներում Քրիստոսը՝ որպես Աստծու զորությունը, մեզ ընդունակ է դարձնում չարչարվելու, հոգսերը կրելու և ամուր կանգնելու:
 2. Նա նաև մեզ սատարում է այն աստիճան, որ անսասան ենք դառնում. այդ իսկ պատճառով Պողոսն ազդարարում է. «Ամեն բան անելու կարող եմ Նրա մեջ, ով ինձ զորացնում է»՝ Փլպ 4:13:
 3. Քրիստոսը՝ որպես Աստծու զորությունը ամեն օր մատակարարում ու սատարում է մեզ Իր աստվածային բաշխման միջոցով:
- Զ. Քրիստոսը՝ որպես Աստծու իմաստությունը, անդադար Աստծուց հոսում է դեպի մեզ, որպեսզի լինի մեր ներկա ու գործնական իմաստությունը մեր փորձառության մեջ՝ Ա Կրթ 1:24:

III. «Նրանից եք դուք Քրիստոս Հիսուսի մեջ, ով Աստծուց մեզ համար իմաստություն դարձավ. և՛ արդարություն, և՛ սրբացում, և՛ փրկագնում»՝ խ. 30.

- Ա. Այս խոսքում Պողոսը չի ասում, թե Քրիստոսը մեր իմաստությունը դարձավ. փոխարենը նա ասում է, որ Քրիստոսը «Աստծուց մեզ համար» իմաստություն դարձավ:
1. «Աստծուց մեզ համար» արտահայտությունը ցույց է տալիս ներկա, գործնական, փորձառության հետ կապված և անդադար մի բան, որն իրականացվում է փոխանցման ճանապարհով:
 2. Այն, որ Քրիստոսը Աստծուց մեզ համար իմաստություն է դարձել, ցույց է տալիս, որ Քրիստոսը՝ որպես իմաստություն, Աստծուց փոխանցվում է մեզ մեր ամենօրյա փորձառության համար:
 3. Մեզ մշտապես անհրաժեշտ է Քրիստոսը՝ որպես Աստծուց մեզ համար իմաստություն:
- Բ. Քրիստոսը մեզ համար Աստծուց իմաստություն դարձավ՝ որպես Աստծու փրկության երեք կենսականորեն անհրաժեշտ բաները:
1. Նա մեր արդարությունն է (մեր անցյալի համար), որի շնորհիվ արդա-

րացվել ենք Աստծու կողմից, որպեսզի մեր հոգում վերածնվենք և աստվածային կյանքը ստանանք՝ Հռմ 5:18:

2. Նա մեր սրբացումն է (մեր ներկայի համար), որի շնորհիվ սրբացվում ենք մեր շնչում, այսինքն՝ փոխակերպվում ենք մեր մտքում, զգացմունքներում ու կամքում Նրա աստվածային կյանքով՝ 6:19, 22:
3. Նա մեր փրկագնումն է (մեր ապագայի համար), այսինքն՝ մեր մարմնի փրկագնումը (8:23), որի շնորհիվ կայլակերպվենք մեր մարմնում Նրա աստվածային կյանքով՝ Նրա փառավոր նմանությունն ունենալու համար (Փլպ 3:21):
4. Աստծուց է այն, որ մենք նման ավարտուն ու կատարյալ փրկության ենք մասնակցում, որը մեր ողջ էությունը՝ հոգին, շունչն ու մարմինը, Քրիստոսի հետ օրգանապես մեկ է դարձնում և Քրիստոսին մեր ամեն ինչը դարձնում:
5. Սա լիովին և ամբողջությամբ Աստծուց է, ոչ թե մեզնից, որպեսզի պարծենանք և հպարտանանք Նրանով, և ոչ թե մեզնով՝ Եփս 3:20-21: